

## **Ուսանողի վարքագծի կանոնակարգ**

*Ուժի մեջ է՝ 01.01.2016թ.-ից*

*Ընդունող մարմին՝*

*Ուսումնական հարցերով փոխնախագահ*

*Հայաստանի ամերիկյան համալսարան  
Հրապարակման քաղաքականություն  
Քաղաքականության համար՝ ACAD20140017*

### **1. Ներածություն**

Իր [առաքելությունն](#) իրականացնելու շրջանակում, այն է՝ «անդրադառնալ Հայաստանի և հարակից տարածաշրջանի կայուն զարգացման կարիքներին այնպիսի միջավայրում, որտեղ գնահատվում և խրախուսվում է ակադեմիական գերազանցությունը, ազատ հետազոտությունը, բարեվարքությունը, գիտությունը, առաջնորդությունը և հասարակությանը ծառայելը», Հայաստանի ամերիկյան համալսարանը (այսուհետ՝ «Համալսարան») ձգտում է ապահովել աջակցող միջավայր, որը ձևավորվում է համայնքի բոլոր անդամների կողմից պատշաճ վարքագծի, ինքնակարգապահության և ընդհանուր արժեքների վրա հիմնված առողջ դատողության դրսևորման վրա:

Ուսանողի վարքագծի կանոնակարգն աջակցում է ուսանողի՝ սովորելու և համալսարանական համայնքի կյանքին մասնակցելու իրավունքը և սահմանում է վարքագծի չափանիշներ ուսանողների և ուսանողական կազմակերպությունների համար՝ Համալսարանում կամ Համալսարանի հովանավորությամբ կազմակերպված ցանկացած միջոցառման ընթացքում, որը նպաստում է ուսուցման գործընթացին, գիտելիքի փոխանակմանը, ուսանողների մտավոր զարգացմանը և հասարակության ընդհանուր բարօրությանը:

### **2. Իրավունքներ**

Որպես համալսարանական համայնքի անդամներ՝ ուսանողներն ունեն սովորելու իրավունք: Այդպիսով, ուսանողներն ունեն ազատ և բաց արտահայտվելու ու գաղափարներ փոխանակելու, խաղաղ հավաքներ կազմակերպելու, ինչպես նաև մաքուր, անվտանգ և հարգալից ուսումնական միջավայր ունենալու իրավունք:

### **3. Պարտականություններ**

Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանող լինելը ենթադրում է ինչպես հնարավորություններ, այնպես էլ պարտավորություններ: Ուսանողները պատասխանատվություն են կրում անվտանգ, առողջ և զարգացող ուսումնական միջավայրի պահպանման համար:

Համալսարան ընդունվելը կամավոր որոշում է և ենթադրում է ակադեմիական համայնքում ընդունված ուսումնական արդյունավետության և վարքագծի չափանիշների կամավոր ընդունում: Այս չափանիշները շատ ավելի բարձր են, քան քաղաքացիական և քրեական օրենսդրությամբ սահմանված չափանիշները: Համալսարանի յուրաքանչյուր ուսանող պարտավորվում է պահպանել տեղական և ազգային օրենքները, Համալսարանի բոլոր քաղաքականությունները, կանոնները և ընթացակարգերը, ինչպես նաև հետևել Ուսանողի վարքագծի կանոնակարգին:

Համալսարան ընդունվելով՝ ուսանողները պարտավորվում են դրսևորել այնպիսի վարքագիծ, որը համապատասխանում է ակադեմիական համայնքի արժեքներին և Համալսարանի՝ որպես կրթական հաստատության գործառնության:

Համալսարան ընդունվելը ենթադրում է Համալսարանի այս և բոլոր քաղաքականությունների ընդունում:

#### 4. Արգելված վարքագիծ

Այն դեպքերում, երբ ուսանողը խախտում է ընդունված վարքագծային կանոնները, Համալսարանը պարտավոր է պաշտպանել համալսարանական համայնքի անդամների՝ անհատական և խմբային շահերը:

4.1 Ոչ պատշաճ վարքագիծ: Ուսանողը չպետք է միջամտի, խաթարի կամ խափանի Համալսարանի, ինչպես նաև ուսանողների, դասախոսների, աշխատակազմի, հյուրերի կամ հարակից համայնքի վարքագիծը կամ գործունեությունը: Տվյալ խախտումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- այլ անձի անվտանգությանը, առողջությանը կամ բարեկեցությանը սպառնալիք հանդիսանալը,
- այլ անձի ազատ տեղաշարժին խոչընդոտելը,
- Համալսարանի դասախոսի կամ պաշտոնատար անձի պարտականությունների կատարմանը խոչընդոտելը,
- այլ անձի խոսքի, հավաքների, կրոնի կամ միավորումների ազատությանը խոչընդոտելը,
- բարձր, անպատշաճ կամ խանգարող վարքագիծ դրսևորելը կամ աղմուկ առաջացնելը,
- վտանգավոր, անխոհեմ կամ Համալսարանի գործառնությունները կամ գործունեությունը խաթարող վարքագիծ ցուցաբերելը,
- ուսումնական գործընթացին խոչընդոտելը:

4.2. Ցանկացած տեսակի ֆիզիկական կամ բանավոր բռնություն, հարձակում կամ հարձակման սպառնալիք որևէ անձի նկատմամբ:

4.3. Այլ անձի նկատմամբ սեռական բռնության, վիրավորանքի կամ ոտնձգության ցանկացած ձև:

4.4. Ալկոհոլի, վերահսկվող նյութերի կամ թմրամիջոցների չարտոնված կամ ապօրինի օգտագործումը, տարածումը կամ պահպանումը, ինչպես նաև ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ Համալսարանի շենքում, հաստատությունում, սեփականությունում գտնվելը կամ ծառայության, ռեսուրսի, գործունեության մեջ ներգրավված լինելը:

4.5. Համալսարանի տարածքում ծխախոտի կամ այլ ծխախոտային պարագաների, այդ թվում՝ էլեկտրոնային ծխախոտների օգտագործումը:

4.6. Համալսարանի կամ որևէ այլ անձի գույքի գողությունը կամ գողության փորձը և/կամ գողացված գույքի պահպանումը:

4.7. Համալսարանի կամ այլ անձի գույքի վանդալիզմ, վնասում, ոչնչացում կամ ապականում:

4.8. Համալսարանի պաշտոնատար անձի համապատասխան հրահանգներին չհետևելը, ներառյալ, բայց առանց սահմանափակման, Համալսարանի անձը հաստատող փաստաթուղթը չներկայացնելը կամ անձի ինքնությունը չհաստատելը Համալսարանի աշխատակցի, դասախոսի կամ անվտանգության աշխատակցի պահանջով:

4.9. Գումարով կամ նյութական արժեք ունեցող որևէ բանով խաղաղորույթ կատարելը (խաղամոլություն), ներառյալ խաղաթղթերով խաղալը:

4.10. Հրազենի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, զենքի կամ որպես զենք օգտագործվող որևէ իրի պահպանումը, օգտագործումը կամ տարածումը:

4.11. Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտման հետ կապված հետաքննության ժամանակ որպես մեղադրյալ կամ վկա չներկայանալը: Ուսանողը, որը ներգրավված է Ուսանողի վարքագծի հետ կապված հետաքննության գործընթացում, իրավունք ունի պահպանելու լռություն:

4.12. Համալսարանի քաղաքականությունների, կանոնների կամ կանոնակարգերի խախտում, ինչպես սահմանված է [policies.aua.am](http://policies.aua.am) կայքում կամ տեղական կամ ազգային օրենքներում:

4.13. Խաղաթղթերով խաղալը Համալսարանի հանրային տարածքներում:

4.14. Ուսանողական նույնականացման քարտեր

- Նույնականացման քարտերը (ID) հանդիսանում են Համալսարանի սեփականությունը և նախատեսված են միայն Համալսարանին առնչվող նպատակների համար: Նույնականացման քարտերը պահանջվում են Համալսարանի միջոցառումների և տարածքների մեծամասնության մուտք ստանալու համար, այդ թվում՝ գրադարան, ճաշարան, մարզադահլիճ և ուսանողական հանրակացարաններ:
- Նույնականացման քարտերը չեն կարող փոխանցվել այլ անձանց. ուսանողը չպետք է թույլ տա մեկ այլ անձի օգտագործել իր քարտը որևէ նպատակով: Յուրաքանչյուր ուսանող պատասխանատու է իր սեփական նույնականացման քարտի և դրա չարաշահման հետևանքների համար: Այն ուսանողը, որը փոփոխում կամ կեղծում է իր Համալսարանի նույնականացման քարտը, կամ պատրաստում կամ տարածում է ցանկացած տեսակի կեղծ նույնականացման քարտեր, ենթակա է կարգապահական պատասխանատվության: Ուսանողները պարտավոր են ներկայացնել իրենց նույնականացման քարտերը կամ այլ կերպ հաստատել իրենց անձի ինքնությունը՝ Համալսարանի ցանկացած լիազորված պաշտոնատար անձի պահանջով:
- Կորցրած քարտերի մասին անհրաժեշտ է անհապաղ տեղեկացնել ՀԱՀ-ի անվտանգության ծառայությանը: Կորցրած ուսանողական լուսանկարով նույնականացման քարտի փոխարինման համար սահմանված է վճար: Եթե նույնականացման քարտը գողացվել է, և ուսանողը ներկայացնում է ոստիկանության զեկույցի պատճենը, որտեղ նույնականացման քարտը նշված է որպես գողացված իրերից մեկը, Համալսարանն ազատում է ուսանողին փոխարինման վճարից: Հակառակ դեպքում կիրառվում է նույն վճարը, ինչ կորցրած քարտերի դեպքում:

## 5. Տեղական կամ ազգային օրենսդրություն

Տեղական կամ ազգային օրենսդրության խախտումը կարող է հանգեցնել Համալսարանի կողմից կարգապահական միջոցների կիրառման: Բացի այդ, Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտումը կարող է միաժամանակ համարվել նաև տեղական կամ ազգային օրենքի խախտում: Նման դեպքերում կարող է իրականացվել դատական հետապնդում արդարադատության համակարգի միջոցով, ինչը չի բացառում Համալսարանի կողմից միաժամանակ կարգապահական գործընթացի անցկացումը: Ուսանողները պետք է գիտակցեն, որ ուսանող լինելու հանգամանքը չի ազատում նրանց տեղական կամ ազգային օրենքների իմացության և պահպանման պարտավորությունից:

## 6. Գործընթաց

Համալսարանական համայնքի բոլոր անդամներն ունեն իրավունք և պարտավորություն՝ Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտումների մասին հաղորդելու Ուսումնական հարցերով փոխնախագահին, իսկ կյանքին կամ գույքին սպառնացող անմիջական վտանգի դեպքում՝ Համալսարանի անվտանգության աշխատակիցներին կամ պետական մարմիններին:

Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտման վերաբերյալ հաղորդումը պետք է ներկայացվի գրավոր կերպով՝ [CodeofConduct@aua.am](mailto:CodeofConduct@aua.am) էլեկտրոնային փոստի միջոցով կամ թղթային եղանակով հետևյալ հասցեով՝ Ուսումնական հարցերով փոխնախագահ, Ուսանողի վարքագծի կանոնակարգ, Հայաստանի Հանրապետություն, Երևան 0019, Բաղրամյան 40:

6.1. Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտման մասին հաղորդում ստանալուց հետո Ուսումնական հարցերով փոխնախագահը կամ նրա կողմից նշանակված իրավասու անձը պարտավոր է.

6.1.1. անհապաղ միջոցներ ձեռնարկել կյանքին կամ գույքին հասցված վնասը մեղմելու և անվտանգության ապահովման համար,

6.1.1.1. Եթե ուսանող(ներ)ը ողջամտորեն կարող են դիտարկվել որպես սպառնալիք ներկայացնող իրենց կամ այլ անձանց համար, կամ եթե ուսանող(ներ)ը սպառնալիք են ներկայացնում Համալսարանի բնականոն գործունեությունը խաթարելու կամ խանգարելու տեսանկյունից, ապա անհապաղ գործողությունները կարող են ներառել ներգրավված ուսանող(ներ)ի ժամանակավոր կասեցումը (հեռացումը Համալսարանից) մինչև յոթ (7) աշխատանքային օրով՝ Ուսանողի վարքագծի և Էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կողմից միջադեպի մանրակրկիտ ուսումնասիրության համար: Նման դեպքերում ուսանող(ներ)ին կարգելվի մուտք գործել Համալսարանի տարածք, մասնակցել միջոցառումներին կամ օգտվել արտոնություններից՝ Ուսումնական հարցերով փոխնախագահի կամ նրա կողմից նշանակված իրավասու անձի սահմանած կարգով:

6.1.2. գնահատել ենթադրյալ խախտումը և, եթե կարգապահական միջոցների կիրառումն արդարացված է.

6.1.2.1. գործը փոխանցել Ուսանողի վարքագծի և Էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովին, որը կուսումնասիրի մեղադրանքը և կներկայացնի համապատասխան առաջարկություն՝ վերջնական որոշման համար, որը կընդունվի Ուսումնական հարցերով փոխնախագահի կողմից՝ համաձայն Ուսանողի վարքագծի և Էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի ընթացակարգային կանոնակարգի,

6.1.3. տեղեկացնել ուսանողին գրավոր կերպով՝ Էլեկտրոնային փոստով կամ թղթային հաղորդագրությամբ, որ նա հանդիսանում է կարգապահական հետաքննության առարկա:

## **7. Կարգապահական միջոցներ, ծանուցումներ և լրացուցիչ պայմաններ**

7.1. Կարգապահական միջոցներ: Հետևյալ կարգապահական միջոցները կարող են կիրառվել առանձին կամ համակցված.

7.1.1. Բանավոր նախազգուշացում

7.1.2. Գրավոր նախազգուշացում

7.1.3. Կասեցում

7.1.4. Հեռացում

7.1.5. Ընդունելության կամ աստիճանի չեղյալ հայտարարում: Համալսարան ընդունվելը կամ Համալսարանի կողմից շնորհված աստիճանը կարող է չեղյալ հայտարարվել խարդախության, փաստերի խեղաթյուրման կամ աստիճան ստանալու գործընթացում Համալսարանի այլ չափանիշների խախտման համար:

Վերոնշյալ միջոցները կիրառվում են՝ կախված տվյալ միջադեպի լրջությունից, խախտման (խախտումների) հետևանքներից և/կամ ներգրավված ուսանող(ներ)ի կարգապահական պատմությունից:

7.2. Ծանուցում

Կարգապահական միջոցների վերաբերյալ ծանուցումներն ուղարկվում են կարգապահական պատասխանատվության ենթարկվող ուսանողին Ուսանողական և Ուսումնական հարցերի գրասենյակի կողմից:

Անչափահաս ուսանողների (մինչև 18 տարեկան) դեպքում ծանուցվում են ծնողները:

### 7.3. Լրացուցիչ պայմաններ

Բացի վերոնշյալ միջոցներից, կարող են կիրառվել նաև լրացուցիչ պայմաններ: Պայմանները ներառում են, *սակայն չեն սահմանափակվում հետևյալով.*

- ֆինանսական փոխհատուցում՝ խախտման արդյունքում պատճառված վնասների դիմաց,
- ուսանողի՝ կրեդիտների համար գրանցվելու հնարավորության վրա դրված սահմանափակումներ, կամ նրանց կարգավիճակի վրա դրված այլ սահմանափակումներ:

Բացի այդ, կիրականացվեն հետևյալ քայլերը.

7.3.1. *Բոլոր* կարգապահական միջոցների մասին ծանուցումները կպահպանվեն ուսանողի անձնական գործում:

7.3.2. Համալսարանից կարգապահական միջոցի հիմքով հեռացված կամ կասեցված ուսանողների պաշտոնական ակադեմիական տեղեկագրում կկատարվի համապատասխան նշում:

7.3.2.1. Նշումները կլինեն համապատասխանաբար՝ «Կարգապահական կասեցում» և/կամ «Կարգապահական հեռացում»:

7.3.2.1.1. Կասեցում: Եթե խախտումից հետո ուսանողը պահպանում է պատշաճ կարգապահական վարքագիծ և կատարում է ավարտական բոլոր պահանջները, ապա կարող է շրջանավարտ դառնալու դիմումի ներկայացման պահին խնդրել իր ակադեմիական տեղեկագրից հեռացնել կասեցման նշումը: Նշումի հեռացման դիմումները պետք է ներկայացվեն Ուսումնական հարցերով փոխնախագահի գրասենյակ: Նշումի հեռացման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է Ուսումնական հարցերով փոխնախագահի կողմից՝ Համալսարանի այլ պաշտոնատար անձանց հետ խորհրդակցությամբ:

7.3.2.1.2. Ժամանակավորապես կասեցված այն ուսանողները (տե՛ս վերևում՝ 6.1.1.), որոնք հետագայում ճանաչվել են խախտման մեջ մեղավորություն չունեցող, իրենց պաշտոնական ակադեմիական տեղեկագրում նշում չեն ունենա:

7.3.2.1.3. Հեռացում: Նշումը մշտական է:

7.3.3. Չմարված պարտքեր: Կասեցված կամ հեռացված ուսանողները պետք է վճարեն բոլոր չմարված պարտքերը:

7.3.4. Վերադարձի քաղաքականություն: Համալսարանից կասեցված կամ հեռացված ուսանողներին ուսման վարձի, վճարների կամ կացարանի գումարի վերադարձ չի տրամադրվում:

## 8. Բողոքարկում

Ուսանողները կարող են բողոքարկել սույն Կանոնակարգով նախատեսված պատժամիջոցները՝ դիմելով Եթիկայի և բողոքարկման հանձնաժողովին՝ համաձայն Բողոքարկման ընթացակարգի կանոնակարգի գործող տարբերակի:

## 9. Սահմանումներ

9.1. Բանավոր նախագգուշացում: Պաշտոնական հայտարարություն (թեպետ բանավոր) այն մասին, որ ուսանողի վարքագիծը խախտում է Ուսանողի վարքագծի կանոնակարգը կամ Համալսարանի որևէ քաղաքականություն կամ կանոնակարգ:

9.2. Գրավոր նախագգուշացում: Գրավոր ծանուցում (Էլեկտրոնային կամ թղթային տարբերակով) այն մասին, որ ուսանողը խախտել է Ուսանողի վարքագծի կանոնակարգը կամ Համալսարանի որևէ քաղաքականություն կամ կանոնակարգ:

9.3. Կասեցում: Ուսանողի հաշվառման ժամանակավոր դադարեցում (հարկադիր ուսումնառության կասեցում) մինչև մեկ լիարժեք ուսումնական տարվա ժամկետով: Կասեցված ուսանողներին արգելվում է մուտք գործել Համալսարան կամ մասնակցել Համալսարանի կողմից հովանավորվող որևէ միջոցառման կամ գործունեության՝ բացառությամբ Նախագահի կամ Ուսումնական հարցերով փոխնախագահի գրավոր թույլտվության դեպքում: Կասեցման պայմաններից որևէ մեկի խախտումը հիմք է հանդիսանում հեռացման համար:

9.4. Հեռացում: Հաշվառման դադարեցում:

9.5. ՀԱՀ համայնք. ցանկացած անձ, որը սովորում, աշխատում է ՀԱՀ-ում կամ այց է կատարում այնտեղ:

## **10. Հնարավոր անհամապատասխանություններ**

Եթե սույն քաղաքականության որևէ դրույթ ուղղակիորեն հակասում է ակադեմիական ծրագրի որևէ դրույթի, ապա գերակայում է սույն քաղաքականության համապատասխան դրույթը:

### **Առնչվող փաստաթղթեր՝**

**Ուսանողի վարքագծի գաղտնիության քաղաքականության մշտական հանձնաժողով**

**Լրացուցիչ տեղեկություններ ունձգության, բուլինգի և խմբային ահաբեկման մասին**

**Ուսանողի վարքագծի և Էթիկայի կանոնակարգի մշտական հանձնաժողով**

**Քաղաքականության տվյալների բազա**

**Ուսանողի Էթիկայի կանոնակարգ**